

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ

ՓԱՍՏԱԹՈՒՐԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

«ԱԼՄԱՍ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Ռուբինյանց 28, հեռ. 24-30-60. ֆաքս 24-35-20

էլ. փոստ info@almastcompany.com

sales@almastcompany.com

N 02 28.04.2012թ.

տեղաբաշխված արժեթղթերի դաս՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 418217 հաւտ

արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)՝ 1000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստագնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթուրել հաշվետվության անբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Վ.Թեպեյիկյան

(անուն, ազգանուն)

Տնօրեն

(պաշտոն)

28.04.2012 թ

(ամսաթիվ)

Դ. Սայանյան

(անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ

(պաշտոն)

(ստորագրություն)

28.04.2012թ

(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են (ստորագրությունները հավաստում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման այլ իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Վ. Թեպեյիկյան

(անուն, ազգանուն)

Տնօրեն

(պաշտոն)

(ստորագրություն)

28.04.2012 թ

(ամսաթիվ)

«28» ապրիլի 2012թ.



**«ԱԼՄԱՍ» ԲԲԸ
2011Թ . ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՏԱՐԵԿԱՆ)**

ԿԱՌԱՎԱՐՍԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է ընկերությունը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք ընկերության կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ավաստային գործիքների արտադրությունն է: Գրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները: Մանրածախ գներով հաշվարկի դեպքում 2011 թ –ի ընթացքում արտադրվել է 135 403 000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) ընկերությունը ձեռք է բերում Ռուսաստանի Գաշնությունից և Չինաստանից: Հաշվետու ժամանակաշրջանում Ռուսաստանից ներմուծվել է 6 306 938 դրամի կարծր համաձուլվածքային փոշի, 4 797 382 դրամի պղնձի փոշի, 4 741 901 դրամի անագի փոշի, 572 124 դրամի պոլիվեր բակելիտ :Չինաստանից ներմուծվել է 7 401 129 դրամի ավաստափոշի, Ռուսաստանից ` 2 106 526 դրամի ավաստափոշի, ՌԻկրաինայից` 2 202 070 դրամի: Արտադրանքի վաճառքի գները 2011 թ-ի ընթացքում կայուն են եղել: Այդ ընթացքում իրացվել է 135 483 000 դրամի արտադրանք: Արտադրանքի իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում: Ռուսաստան արտահանվել է 918 000 դրամի, Իրան` 42 424 037 դրամի, Խորվաթիա` 305 000 դրամի արտադրանք: Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 01.01.2011 թ. և 01.01.2012թ. դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

«Այնաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)

	Պահեստում	
01.01.2011 թ.	376 577 000	
01.01.2012թ.	376 499 000	

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2011թ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-135 403
Իրացման ծախսեր	-3 624
Վարչական ծախսեր	-57 435
Գործառնական գործունեությունից շահույթ	-50 000
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	-17 060
2011թ. գուտ շահույթ	-69 964
Հիմնական միջոցները 01.01.2012թ.	880579
Կանոնադրական կապիտալը	418 217
Գերփոհորական պարտք	24 529
Կրեդիտորական պարտք	1 134 434

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2011թ..*

Ցուցանիշի անվանումը	01.01.2012 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-0,167
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-0,162
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-0.045
Զուտ շահույթի մարժա (NPM)	-0.516
Կապիտալի համարժեքության գործակից	0.275
Ֆինանսական կախվածության գործակից	2.630
Բացարձակ իրացվելության գործակից	0.031
Ընթացիկ իրացվելության գործակից	0,549
Ընդհանուր իրացվելության գործակից	15,543
Գեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	6,540
Գեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	55,810
Պաշարների շրջանառելիության գործակից	-0.833
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	-438,175
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-0.239
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-1527,197

* Գործակիցների հաշվարկման ժամանակ միջանկյալ ժամանակաշրջանի (կիսամյակի) ցուցանիշները տարեկանացված են:

2) Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել: Սակայն նշենք, որ գեկույցը կազմելու պահի դրությամբ Ռ-ուսաստանի Դաշնությունից պատվերներ չկան, իսկ տեղական պատվերները անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են:

3) Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև գեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը լուրջ ալի դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ռոջամիտ մերդրողը կկարևորի մերդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության կարծիքով կարևոր դեպքերը բացակայում են:
 Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերությունը շահութաբաժիններ չի վճարել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Կարեն Մանուկով	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար
Վահրամ Թեպելիկյան	Տնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	Ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Ռուբեն Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Մանվել Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Օլգա Գասպարյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Վարազդատ Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Դոնարա Սայամյան	գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԷՆ - ԱՈՒՐԻՏ»

ՍԱՀԱՆԱԾԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



REPUBLIC OF ARMENIA

" N – AUDIT "

LIMITED LIABILITY
COMPANY

375002, Երևան, Թումանյան-40/28

Աուդիտորական ծառայությունների
իրականացման լիցենզիա
թիվ ԱԾ N 007, 06.06.2002թ.

375002, Yerevan, st. Tumanyan-40/28

Հեռ. ☎ (37410) 53-40-41, (37491) 40-80-41
e-mail: n-audit@web.am

28.04.2012թ.

ԱՆԿԱՆ ԱՈՒՐԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՆԱՍՍ» ԲԲԸ
բաժնետերերին

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Սեր կողմից իրականացվել է «ԱՆԱՍՍ» ԲԲԸ կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը: Ընդ որում, այդ հաշվետվությունները ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև 2011 թվականի համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը: Աուդիտի ենթարկված հաշվետվությունների կազմում ներառված են նաև ծանոթագրությունները, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Չեր ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեցույցներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի անհրաժեշտ վերահսկողության համակարգ սահմանելու համար, որը թույլ է տալիս ապահովել խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Ենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա վերոնշյալ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները, մասնագիտական վարքագծի կանոնները և պլանավորել և իրականացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են վերոնշյալ ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր: Այդ ընթացակարգերի ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Ենք հանդգնում ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կ ար ծ ի թ

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «ԱԼՄԱՍ» ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալի փոփոխությունները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

Աուդիտոր՝..........Ն. Աղեքսանյան

Գործադիր տնօրեն՝..........Վ. Սիկողոսյան

